

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՈՂԲԸ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երրորդ գրքի 68-րդ գլուխը՝ «Ողբը վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, և ևս պիտոսպոսպետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի» վերտառութեամբ բազմաթիվ քննությունների, մեկնաբանությունների և թարգմանությունների (որոնք ևս միշտ մեկնաբանության տարրեր են պարունակում) առարկա է դարձել հայագիտական գրականության մեջ:

Այսպես, Ներսես Աղայանը Ողբի բովանդակությունը միանգամայն անհարիր է համարում «Հայոց պատմության» բովանդակությանը, այլև, ընդհանրապես, V դարի առաջին կեսի պատմական իրականությունը: Նա պնդում է, որ Ողբը քնդհանրապես V դարի գործ չէ և Մովսես Խորենացու գրչին իսկ չի պատկանում, այլ VIII դարի պատմիչ Ղևոնդի ևրկի վերջաբանն է¹: Իհարկե, Աղայանի այս կարծիքը կանխակալ է և անընդունելի: Ողբի զոնն առաջին մասը ոչ միայն համահունչ է բուն «Պատմության» բովանդակությանը, այլև համատարր է նրան բառակազմի, բառադարձի, աղբյուրների, նրանց իրացման ձևի և այլ կողմերով:

Այսուհանդերձ, նաև այն հետազոտողները, որոնք կասկած չունեն Ողբի՝ Խորենացու գրչին պատկանելու և «Պատմության» հարազատ մաս լինելու վերաբերյալ, ստիպված են նրա երկրորդ մասի կապակցությամբ փաստարկներ որոնել, ապացուցելու համար, որ այն ևս համահունչ ու հարազատ է «Հայոց պատմությանը»,

Բանն այն է, որ Ողբը, ևրկու մասից բաղկացած լինելով, առաջին մասը հարազատորեն, թեև յուրահատուկ հուզական, հրապարակախոսական ձևով արտացոլում է «Պատմության» վերջին գլուխներում պատմականորեն նկարագրված իրադարձությունները՝ Արշակունիների վերջին ներկայացուցիչ Արտաշեսի դահազրկումը և Սահակ Պարթևի զրկումը կաթողիկոսությունից ու նրա մահը: Երկրորդ մասը, սակայն, որ հասարակության գերողբերգական վիճակ և բնության սարսափելի արհավիրքներ է պատկերում, իսկապես չի աղերսվում ո՛չ «Պատմության» բովանդակությանը, ո՛չ էլ V դարի պատմությանը:

Նշենք նաև, որ Խորենացու «Պատմության» երրորդ գրքի 68-րդ գլխի վերնագիրը ծածկում է նրա բովանդակության առաջին մասը միայն, մինչդեռ երկրորդ մասը լիովին դուրս է մնում այդ ծածկից:

Ահա, ուրեմն, Ստ. Մալխասյանը, նշելով, որ «Հայոց պատմությունը», ինչպես որ այն շարադրել է Մովսես Խորենացին, այլև V դարի իրականությունը, հիմք չէին տալիս գրելու Ողբի ևրկրորդ մասը, գտնում է, որ այս դրվագը պարզապես «սրտահալտոսություն է նրա (Խորենացու—Գ. Ս.) վշտահար հոգու և հոռետես տրամադրությունը»²: Չնայած այս բացատրության

1 Ն. Ա կ ի ն յ ա ն. Մովսես Խորենացու Ողբը Ղևոնդ Երեցի պատմության վերջաբանն է.— «Հանդես ամսօրյան», 1930, հունվար-փետրվար, № 1—2:

2 Եվ ավելացնում է. «Պուշկինը մի անգամ գրել է. «Как эта глупая луна на этом глупом небосклоне». Ոչ մի ընթերցող, իհարկե, չի ընդունի, որ անմեղ լուսինն ու ևրկնակամարը հիմար լինեն, այլ բոլորն էլ այնպես կհասկանան, թե այս տողերը գրելիս բա-

պարզունակ և հուզական բնույթին, այն ճշմարտության տարր է պարունակում: Այն խորացնում ու լրացնում է Լ. Զեքիայանը. «Արդարև, — գրում է նա, — խորենացիի երկը վերջ մը կպատմե, լավ ևս, վերջը Հայոց թագավորության, որուն կկապվի նաև վախճանը Ս. Գրիգոր Լուսավորչի Տունեն կաթողիկոսական հաջորդականության: Այս վերջինս ունեցած է ժամանակակիցներուն համար շատ ավելի սուր և տրամային նշանակություն մը՝ քան ինչ որ կրնա ունենալ հայ ներկա սերունդներուն համար և կամ զոր կրնա վերագրել անոր զուտ բանական եզրերով, որևիցե պատմական վերլուծում: Թագավորությունը, Արշակունյաց հարստությունը ի մասնավորի, խորհրդանիշն էր Հայոց միություն և մեծության, իսկ Լուսավորչի Տունը՝ երաշխիքը Հայ նվիրապետության «հաստատության», Հայոց եկեղեցվուն «անշարժություն»:

«Այս կրկնակի վերջը, բայց հատկապես թագավորության վախճանը, Պատմահոր համար կներկայացնեն՝ իսկն իր մեջ «բացարձակ» վերջ մը, վերջ մը՝ որ չի կրնար «սրբագրվիլ», վերջ մը՝ որով տուժածը չի կրնար վերստուգվիլ, վերաշահվիլ, վերստին համարվիլ: Բան մը վերջացած է հոն ընդմիշտ»³...

Արժանին հատուցելով հեղինակի՝ պատմականության սկզբունքի նրբին ըմբռնմանը, գտնում ենք, որ այսուհանդերձ ասվածը թեև ընդհուպ մոտեցնում է մեզ համոզիչ պատասխանին, բայց չի հասցնում նրան: Այն փաստարկը, որ ներկա սերունդների մոտեցումները կամ պատմական վերլուծման արդյունքները չեն կարող լինվին քննատեղի ազդեցության այն աստիճանը, որ ունեցավ ադր «կրկնակի» կամ «բացարձակ» վերջը խորենացու վրա, այնուամենայնիվ ի վիճակի չէ համոզիչ կերպով ապացուցել, թե ինչպես Պատմահայրը, ինչքան էլ խորապես ցնցված ու ազդված լիներ, կարող էր այդպիսի գույներով, որակումներով և նամանավանդ բնության՝ իր իսկ պատմության մեջ կամ այլուր շարժանագրված արձավիթները ևս ներգրավելով, նկարագրել իր ժամանակի իրականությունը, ակներև հակասության մեջ ընկնելով «Պատմության» շարադրանքի, էլ չենք ասում, իր իսկ տեսածի հետ:

Անեղծվածի բանալին իմ կարծիքով, այն հանգամանքն է, որ մենք Ողբի երկրորդ մասը պիտի դիտենք ոչ թե որպես նկարագրություն, այլ նախատեսում, կանխազգուշացում: Այդ դեպքում ամեն ինչ իր տեղն է ընկնում: Խորենացին խորապես ազդված և ցնցված այգ, Լ. Զեքիայանի բառերով ասած, «կրկնակի վերջով», որը նրան նաև որպես «բացարձակ վերջ», մշտնջենական, անդառնալի վերջ էր ներկայանում, անշուշտ կարող էր նախատեսել Ողբի սարսափները, և այս արդեն ամենևին չի հակասում նրա «Պատմության»:

Այսպիսով, բացատրությունը հետևյալն է: Ողբի այդ երկրորդ մասը, որն սկսվում է «Վառդապետք տխմարք» բառերով և շարունակվում մինչև դրձի վերջը, ոչ այլ ինչ է, քան մարգարեություն, գուրակություն, և ոչ՝ կոնկրետ իրավիճակի նկարագրություն, ինչպես որ այն ընկալվել և ընկալվում է:

նաստեղծը հոգեկան վատ տրամադրության մեջ է եղել» (Իրականում, այս խոսքերը ոչ թե հեղինակային են, այլ պատկանում են Օնեգինին): «Ողբի գրության ընթացքում, — շարունակում է Մալխասյանը, — երբ հեղինակն այնպես սուր կերպով զգացել է հայ ժողովրդի անխնայությունը և անկախությունից զրկվելը, մեծ՝ անփոխարինելի ուսուցիչների կորուստը և իր անձնական զրկանքները, նա համակվել է խոր, անսփուխ վշտով, րնկել է հուսահատության մեջ և այս զգացմունքների ազդեցության տակ խտացրել է իրական պակասություններն ու չարիքները...»: Մ ո վ ս և ս Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Հայոց Պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ զոկտոր Ստ. Մալխասյանցի. Երևան, 1940, էջ 343, ծան. 358:

3 Լ. Զեքիայան. Նորից Մովսես Խորենացու «Պատմության» մասին. — ՊԲՀ, 1993, № 1—2, էջ 31:

4 Ն. Ակիբյանը վերջը նշված հոդվածում, սահմանադատվելով այն հեղինակներից, որոնք Ողբը համարում են «Հայոց պատմության» անբաժանելի մաս, գրում է. «Բայց և այնպես

Քննարկենք Ողբի երկրորդ մասը՝ մեր հայեցակետով: Այն իր շարադրանքի ոճով կտրականապես տարբերվում է նրա առաջին մասից և, պետք է ասել, «Հայոց պատմության» ողջ շարադրանքի ոճից (կամ ոճերից, քանի որ խորենացին բազմաոճ է): Բավական է ասել, որ շարադրանքն այդտեղ, այսպես ասած, «արտաժամանակյա» է, շունի ժամանակ, ոչ անցյալ, ոչ ներկա և ոչ էլ ապանի, և այդ՝ «Հայոց պատմության» քննական հրատարակության նրան վերաբերող բոլոր 55 տողերում: Մի քանի օրինակ բերենք տարբեր բովանդակություն ունեցող տեղերից, սկսելով հենց առաջին տողից:

«Վարդապետը ախմարք և ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ լԱստուծոյ պոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով...»

«Դատաւորք տմարդիք, սուտք, խարոզք, կաշառառութ, անընտրողք իրաւանց...»

«Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, և տարբեց փոփոխել զբնութիւնս իւրեանց: Դարուն երաշտացեալ, ամառն անձրևալուղ, աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց... երկրի անրերութիւնք պտղոց և անաճելիութիւնք կենդանեաց...»

«Ղի թաղաւորք տիրեալք խիստք և շարաշարք, բեռինս բառնալով ծանունս և զժուարակիրս... զերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց... առումն բաղաբայց և ամբողջաց... աստուածասլաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն զհճենի»:

Պետք է ասել, որ առկա թարգմանություններից (նկատի ունեմ անգլերենը՝ Ռ. Թոմսոնի, ֆրանսերենը՝ Ժ.—Պ. Մահեի, երկու աշխարհաբարը՝ Խ. Ստեփանեի և Ստ. Մարխասյանի, երկու ռուսերենը՝ Մ. Էմինի և Գ. Սարգսյանի) և ոչ մեկում Ողբի շարադրանքի այս «արտաժամանակյա» ձևը իր հետևողական և վերջավորված արտահայտությունը չի գտել: Այսպես, անգլերեն և ֆրանսերեն թարգմանություններում քննարկվող հատվածը ծայրեծայր ներկայացված է մասամբ անցյալ և մասամբ՝ ներկա ժամանակներով: Հնարավոր է, որ այդ լեզուներով ղեկավար կամ անկարելի է եղել գտնել համարժեք թարգմանության ձև:

Գալով հայերեն թարգմանություններին, անկասկած է, որ աշխարհաբարը լիովին հնարավորություն է տալիս համարժեքը գտնելուն, բայց, այսուհանդերձ, թարգմանիչները շեղումներ են թույլ տվել, թեև տարբեր շափերով: Այսպես, Խ. Ստեփանեի մոտ դրանք ընդամենը երկուսն են, և երկուսն էլ ունեն որոշ «հանդամանք մեղմացուցիչ հանցանաց»: Դրանք են.

խորենացի. «Աշակերտք հեզք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել, որք նախքան զտեսութիւնն աստուածաբանք» («արտաժամանակյա»):

Ստեփանե. «Աշակերտներն ուսանելու մեջ ծուլյ, ուսուցանելու մեջ շտապող, որոնք ոչիկ տեսություն չիմացած արդեն աստվածաբաններ են» (ներկա):

որոնք բարի հավատրով մերձեցած են Ողբիս և համարած են զայն անբաժան մասն «Հայոց պատմության» նկատած են նաև Ե. զարու առաջին կեսի պատկերի ցուցումը, Մահակի և Մաշտոցի և անոնց հակաթոռ կաթողիկոսների ղեմերը, տեսած են նաև 440—480 թթ. շրջանի ղեպրերի մասին մարդարեական ակնարկություններ» (էջ 11): Այստեղ հղման նիշ դնելով «ցուցումը» բառի վրա, ն. Ակինյանը տողատակում հիշատակում է երկու հոդված՝ 1. 2. Պ ա ս մ ա ճ յ ա ն. Քննութիւն Ողբոյն Մովսիսի Խորենացւո.—ժանդես ամսօրյա», 1891, էջ 362—364, և նորայր Բ յ ու ղ ա ն ղ ա յ ց ի. «Քննասեր», պրակ Բ, Ստոկհոլմ, 1888, էջ 21: Առանցից առաջինը գտնում է, թև Ողբը գրված է «Պատմությունից» առաջ և սառ կցված է նրան, երկրորդը՝ թև «Ողբը խորենացւոյն երկին գրված նախքան զպատերազմն վարդանանց» Ավելացնենք նաև, որ ըստ վերջին հեղինակի կարծիքի, խորենացու «Պատմությունը» շարագրվել է 486—490 թթ.: Թև ինչպես է վերագրում ն. Ակինյանը այս հեղինակներին (թև՝ ուրիշ հեղինակներին), թև նրանք Ողբի մեջ «տեսած են նաև 440—480 թթ. շրջանի ղեպրերու մասին մարդարեական ակնարկություններ», մեղ այնքան էլ հասկանալի չէ:

Այստեղ թարգմանչին, ըստ երևույթին, շեղել է «որք» դերանունը, որը, սակայն, հորենացուն, ինչպես տեսնում ենք, չի խանգարել պահպանելու իր ընտրած ոճը:

հորենացի. «Զի թագաւորք տիրեալք խիստք և շարաշարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս» («արտաժամանակյա»):

Ստեփանն. «Որովհետև տիրում են խիստ և շար թագավորներ, ծանր դժվարատար բեռներ դնելով, անտանելի հրամաններ տալով» (ներկա):

Այստեղ էլ թարգմանչին, հավանաբար, շեղել է «զի» նախդիրի առկայությունը, որը, դարձյալ, հորենացուն չի խանգարել պահպանելու իր ոճը: Նշենք նաև, որ «զի» նախդիրն այստեղ, ինչպես այդ պատահում է երբեմն հորենացու մոտ՝ նախադասության կամ պարբերության սկզբում, կոչված է զուտ ձևական կապ ստեղծելու նախորդ նախադասության կամ պարբերության հետ⁵ և նույնիսկ կարող է շարգմանվել, ինչպես տվյալ դեպքում այդ տեսնում ենք, օրինակ, Թոմսոնի և էմինի թարգմանություններում:

Հատվածի մնացած մասի թարգմանությունը ժամանակի առումով լիովին հարազատ է բնագրին:

Ստ. Մալխասյանը ևս իր թարգմանության մեջ թույլ է տվել Ստեփաննի մոտ առկա այս զույգ շեղումները, և ավելացրել մի շարք ուրիշները: Դրանք հիմնականում կուտակված են Ողբի քննարկվող մասի վերջին պարբերության մեջ: Օրինակ.

հորենացի. «Վերակացուք անհարթարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք» («արտաժամանակյա»):

Մալխասյան. «Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են...» (ներկա):

Թեև ոուսաց լեզուն, հայերենի նման, թույլ է տալիս թարգմանության մեջ պահպանել հորենացու առաջադրած շարադրանքի այս յուրահատուկ ոճը, սակայն Մ. էմինը ևս թույլ է տվել նման շեղումներ:

հորենացի. «Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամոթոյ» («արտաժամանակյա»):

էմին. «Все вообще лишены любви и стыда» (ներկա):

հորենացի. «Զի թագաւորք տիրեալք խիստք և շարաշարք, բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրք» («արտաժամանակյա»):

էմին. Цари царят жестокие, налагающие большие, тяжелые бремена... (ներկա):

հորենացի «...հաւատ վաճառեալ ընդ սնտոի կենցաղոյս» («արտաժամանակյա»):

էմին. Вера продана за суетную жизнь (ներկա):

հորենացի. «...աստուածապաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն դեհենի» («արտաժամանակյա»):

էմին. Забыто служение богу и впереди—ад (ներկա):

Գ. Սարգսյանի ոուսերեն թարգմանության մեջ ևս կա մեկ նմանօրինակ շեղում, որին կանգրդառանք ստորև:

Արդ, Մովսէս հորենացու Ողբի քննարկվող մասի շարադրանքն ըստ հեղինակի մտահղացման իսկապէ՞ս «արտաժամանակյա» է, թե այն ունի իր տրամաբանական ժամանակը: Անշուշտ, ճիշտ է վերջինը:

⁵ Հմմտ. օրինակ, «Գիտելով իմ, եթէ ոչ ինչ ծածկի ի բումմէ թագաւորութենէդ, այլ իբրև մտերիմ քո՝ ավելի ևս իմացուցանեմ ի ձեռն գրոյ: Զի հրեայք, որ բնակեալ են ի գաւառս Պաղեստինացոց՝ ժողովեալ խաչեցին զՔրիստոս...»: («Թուղթ Աբգարու առ Տիրերիոս», II, 34): Կամ Սմբատի մասին. «...զգոյշ յամենայնի, և տուչութիւն յաջողածոց ունէր ի մարտս առաւել քան զամենայն որ: Զի յետ այնչափ առութեանց՝ օգնական եղբօրն Սաթինկան յաշխարհն Ալանաց հանդերձ զօրու երթայ...» (II, 52):

Խնդիրը պարզարանելու համար դիմենք Ողբի մի այլ նախադասության, վերցրած նրա առաջին մասից: «Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք յարտաքուստ. արհավիրք ի հեթանոսաց և մարտք ի շերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»: Եթե այս նախադասությունից հանենք սկզբի «այժմ» բառը և վերջում՝ «և խորհրդականն չէ ի միջի...» և այլն, ապա կստացվի վերը քննարկածին նման «արտաժամանակյա» մի շարադրանք: Բայց իր փաստական տեսքով այն ներկային է պատկանում:

Արդ, և թե նույն նախադասության մեջ, մի կողմից, «այժմ»-ը փոխարինենք «եղևն» կամ «լինիցին» բառերով, իսկ «չէ ի միջի»-ն՝ «չէր ի միջի» կամ «չիցէ ի միջի» դարձվածքով, ապա բերված նախադասությունը կստանա անցյալի կամ ապառնիի իմաստ: Ուրեմն, «արտաժամանակյա» արտահայտությունների ժամանակը կախված է նրանց համատեքստից, այն բանից, թե ինչպես են ներածվում կամ (և) եղրափակվում նրանք: Այս օրինակից չվերլուծված, փորձենք որոշել Ողբի երկրորդ մասի շարադրանքի ժամանակը: Այն որոշակի է դառնում մի շարք հանգամանքների շնորհիվ, որոնցից սկզբում անդրադառնանք հատվածը ներածող արտահայտություններին:

Հիշեցնենք, որ Ողբի առաջին մասն ամբողջությամբ նվիրված է, ինչպես և ազդարարում է դիտի վերնագիրը, հայոց թագավորության՝ Արշակունի տոհմից և հողևոր հովվության՝ Լուսավորչի տոհմից վերանայու հետ կապված՝ հեղինակի ողբերգական ապրումների շարադրանքին: Հեղինակը դիտարկում է այդ իրողությունը ամենատարբեր կողմերից և յուրաքանչյուր անդամ հուսարությունը ապրում եղածի հետևանքների կապակցությամբ՝ թե՛ հայոց ազգի և թե՛ իր սեփական անձի առումով:

Եղրափակելով Ողբի այդ մասը, Խորենացին գրում է. «Եւ ոչ դիտեմ, և թե դիտար յարմարեցից զողբերդոթիւնս... զաշխարհիս և կեանքի ազետս, և թէ զապաղաւիցն ականկալութիւնս»: Այստեղ առաջին անգամ Ողբում հնչում է ազետարեր ապաղալի կանխադուշակման պահը, որից հետո շարադրանքը շրջվում է դեպի այդ նոր ուղին: Հեղինակը ողբկոչում է աստվածաշնչական ամենաերևելի մարդարեաներից մեկին. «Զարթի՛ր, Երեմիաս, զարթի՛ր և ողբա՛ր հանդերձ մարդարէանայով որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս և մը. զուշակեա՛ր զյառնել հովուաց տղիտաց, որպէս ևրբեմն Զաքարիաս յՄարայելիս»:

«Ողբա՛ր հանդերձ մարդարէանայով», շեշտում է Խորենացին, այսինքն ոչ թե սոսկ ողբա, այլ ինչպես պատշաճում է մարդարեան, ելնելով առկա թշվառությունից, զուշակիր դալիթ թշվառությունները: Այնուհետև Պատմահայրը լիովին ճշգրտում է իր հայցը, ասելով՝ «զուշակեա զյառնել հովուաց տղիտաց, որպէս ևրբեմն Զաքարիաս յՄարայելիս»:

Իսկ ի՞նչ է զուշակել Զաքարիա մարդարեն Իսրայելին «տղետ հովիվներին» վերաբերյալ, որը որպես օրինակ է բերում Պատմահայրը Երեմիային: Աստվածաշնչում Զաքարիայի մարդարեան մեջ կարգում ենք. «...զի հաւաստիկ ես (Աստված—Պ. Ս.) յարուցանեմ հովիւ տղէտ ի վերայ երկրի. զվատեալն ոչ յանձանձիցէ, և զցրուեալն ոչ խնդրիցէ, և դրեկեալն ոչ բժրշկեացէ, և զողջն ոչ զարմանեսցէ. և զմիս բնտրանացն կերիցէ, և զոտս նոցա փշրեսցէ» (Զաք. ԺԱ, 16):

«Հովիւ» բառը, բացի խաշնարածից, ունի, ինչպես հայտնի է, նաև փոխաբերական՝ զեկավարի, հողևոր և աշխարհիկ տարբեր մասշտաբի առաջնորդի (Աստծուց և թագավորից սկսած մինչև վերակացու և քահանա) իմաստ, որը և այստեղ կիրառված է և շեշտված «տղետ» ածականով: Առաջին առումի դեպքում ալն անտեղի կլինի: Հատկանշական է, որ այստեղ Խորենացին, հղելով Զաքարիայի զուշակությանը, բառադիտքեն չէ, որ հետևում է նրան, բանի որ խոսում է ոչ թե մեկ «տղետ հովիվի» (ինչպես այնտեղ է), այլ մի շարք, բաղմաթիվ, «տղետ հովիվների» գալստյան մասին, անշուշտ, ունենալով իր միտումը: Այդ միտումը ի հայտ է գալիս հենց հա-

չորդ տողից, երբ, մեր կարծիքով, սկսում են կոնկրետ թվարկվել գալիք «տոգետ հովիվները» արդեն ոչ թե Իսրայելի, այլ Հայաստանի համար՝ վարդապետներ, կրոնավորներ, վիճակավորներ (եպիսկոպոսներ), զորականներ, իշխաններ, դատավորներ, ապա և թագավորներ, վերակացուներ, ինչպես և «նախքան գտեսութիւնն (այսինքն՝ տգետ) աստուածաբանք»-աշակերտներ և «փախչողք ի ժառանգութենէ» ժողովրդականներ: Եվ այս բոլորը՝ օժտված այնպիսի բնութագրումներով, որոնք ամենաընդհանուր իմաստով տեղավորվում են Զաքարիայի «տոգետ հովիվն» տրված որակումների մեջ:

Այսպիսով, քննարկվող ներածական պարբերության մեջ Մովսես Խորենացին, մարգարեանալու կոչ անելով Երեմիային և որպես օրինակ հանդես բերելով Զաքարիայի գուշակությունը Իսրայելին, կարծես հանձն է առնում Երեմիայի դերը և իր բերանով գուշակություններ անում Հայաստանի ապագայի վերաբերյալ:

Այստեղից էլ պարզվում է այս «արտածամանակյա» ամբողջ շարադրանքին վերադրելի ժամանակի հարցը ու միևնույն ժամանակ հաստատվում, որ այն ոչ թե առկա վիճակի, այլ գալիքի բնութագրում է, այսինքն՝ մարգարեություն:

Այժմ անհրաժեշտ է առանձին անդրադառնալ մարգարեության մի հատվածի, որը բերվեց վերը՝ «արտածամանակյա» նմուշների շարքում, սակայն չքննարկվեց թարգմանությունների առումով, որովհետև հատուկ դիտարկում է պահանջում:

Կրկնում ենք հատվածը: «Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, և տարերց փոփոխել զբնութիւնս իւրեանց: Գարուն երաշտացեալ, ամառն անձրևայոյզ, աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառուց...»: Ինչպես տեսնում ենք, Պատմահայրն այստեղ ևս չի դավաճանել իր գուշակության համար որդեգրած «արտածամանակյա» ոճին:

Իսկ ինչպիսին են թարգմանությունները: Համեմատենք վերը հիշատակված վեցը:

Մահե. Or, quel indice nous confond de tous ces crimes, ci ce n'est que Dieu nous a abandonnés et que les éléments ont changé leur nature? Le printemps est devenu torride, l'été pluvieux, l'automne hivernal, l'hiver d'un froid intense...*

«Այսպես, ուրեմն, ի՞նչ ցուցանիչ է մեզ ապացուցում այս բոլոր մեղքերը, եթե ոչ այն, որ Աստված լքել է մեզ և որ տարրերը փոխել են իրենց բնույթը: Գարունը դարձել է տոթային, ամառն՝ անձրևային, աշունը՝ ձմռան նման, ձմեռը՝ սաստիկ ցուրտ...»:

Թոմասն. What then does this demonstrate, save that God has abandoned [us] and that the elements have changed their nature? Spring has become dry, summer very rainy, autumn like winter, and winter has become very icy...?

«Ի՞նչ է ապացուցում այս, բացի այն բանից, որ Աստված [մեզ] լքել է և որ տարրերը փոխել են իրենց բնույթը: Գարունը դարձել է շորային, ամառը խիստ անձրևային, աշունը ձմռան նման, և ձմեռը՝ սաստիկ ցուրտ...»:

Մալխասյան. «Եվ ի՞նչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ Աստված մեզ անտես է արել և տարրերը փոխել են իրենց բնությունը—գարունը՝ երաշտ, ամառը սաստիկ անձրևային, աշունը՝ ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ...»:

Ստեփանն. «Եվ հետո այս բոլորի փոխարեն ի՞նչ է, եթե ոչ Աստուծո մեղ անտես անելը և տարրերի իրանց բնությունը փոխելը: Գարունը առանց անձրևի, ամառը խիստ անձրևներով, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ սառած...»:

Эмни: «И следствием всего этого то, что Бог покинул нас и изменил природу стихий: весна сухая, лето дождливое, осень—ставшая зимою, зима суровая...»

«Եվ այս բոլորի հետևանքը այն է, որ Աստված լքել է մեզ և փոփոխել տարրերի բնույթը. գարունը չորային է...» և այլն:

Մարգարյան. «Что же служит пеней за все это, как не пренебрежение со стороны Бога и изменение стихиями своих свойств: Засушливая весна, дождливое лето, морозная осень, суровая зима...»

«Եվ ինչն է պատիժ ծառայում այս բոլորի համար, եթե ոչ Աստծու կողմից արհամարհվելը և տարրերի՝ իրենց բնույթը փոխելը: Չորային գարուն, անձրևային ամառ...» և այլն:

Ակներևաբար, այս թարգմանությունների մեջ երկու տարբեր իմաստային մոտեցում է նկատվում, որը գալիս է «յանդիմանութիւն» բառի մեկնաբանությունից ու թարգմանությունից:

Թարգմանիչների առաջին եռյակը հասկացել է այն որպես «ապացույց», որպիսի դեպքում ստացվում է հետևյալ իմաստը՝ մեր մեղքերն ապացուցում են, որ Աստված մեզ լքել է: Երկրորդ եռյակը հասկացել է այդ բառը որպես «հետևանք, հատուցում, պատիժ», որպիսի դեպքում իմաստն այսպիսին է. մեղքերի հատուցումն այն է, որ Աստված մեզ լքել է:

«Ապացույց» իմաստը, բացի այլ ամենից, այստեղ անտրամաբանական է: Մեղքերն այնքան ցցուն են ներկայացված, որ որևէ ապացուցման կարիք չունեն:

Տրամաբանական է հակառակը. Աստված մեզ լքել է մեղքերի պատճառով: Հենց այս իմաստն էլ ընկած է երկրորդ եռյակի թարգմանությունների հիմքում:

ՆՁԲ-ը տալիս է «յանդիմանութիւն» բառի երկու հիմնական իմաստ, մի կողմից՝ «կշտամբութիւն, խրատ» իրենց տարատեսակներով, մյուս կողմից՝ «ապացույց» իր տարբերակներով: Սրանցից երկրորդը բոլորովին խորթ է Մովսեսի խորհնացու բառագործածությունը: Եթե վերանանք վիճահարույց դեպքից, կիրառման մնացած դեպքերը (I, 6, III, 14, 32) կշտամբելու, քրննադատելու, խրատելու իմաստ են տալիս: Նույն պատկերն է «յանդիմանեմ» բայի (II, 46, III, 31, 65) և «յանդիմանեալ» դերբայի (I, 17, II, 29, III, 38, 63) դեպքերում:

Գալով «յանդիման» հիմքի կիրառմանը, այն բոլոր դեպքերում նշանակում է «հանդեպ», «դիմաց», «դեմ դիմաց» (I, 29, III, 17, 39, 50, 65, 67):

Ահա, խնդրո առարկա դեպքը կապվում է հենց «հանդիմանություն», «խրատ» և այլն և ոչ՝ «ապացույց» իմաստի հետ: Մենք մեր թարգմանության մեջ ելել ենք այն ըմբռնումից, որն առկա է, ինչպես տեսանք, նաև Ստեփանեի և էմիլիի թարգմանություններում:

Քննարկվող նախադասության բոլոր հիշատակած թարգմանողները թույլ են տվել նաև այլ շեղումներ բնագրից: Սրանցից մեկն այն է, որ խորենացու «արտաժամանակյա» ոճին նրանք քերականական ժամանակ են հաղորդել: Այս տեսակետից ամենաճշգրիտը, թեև ոչ անթերին, Ստեփանեի և իմ թարգմանություններն են: Ստեփանեի մոտ թերությունը «փոխարենը ի՞նչ է» արտահայտության մեջ «է» օժանդակ բայի առկայությունն է, որով պարտադրվում է ներկա քերականական ժամանակը, և նույնը ինձ մոտ՝ «Что же служит пеней?»—«Ի՞նչն է պատիժ ծառայում» արտահայտության մեջ: Ստեփանեի մոտ պիտի լինեն «և փոխարենն ի՞նչ» իսկ ինձ մոտ՝ «какова же пеня?»—«և ինչպիսի՞ պատիժ»:

Մյուս շորս թարգմանությունները շատ ավելի հեռու են բնագրից, ներկայացնելով նախադասությունը անցյալ կատարյալ ժամանակով՝ «աստված

մեզ լքել է», այսինքն հաղորդելով ողջ նախադասությանը կատարվածի հմաստ, որը բնագրում բացակայում է:

Երկրորդ շեղումն առկա է, բայց իմ թարգմանությունից, բոլոր մուսուներում: Դա «մեզ» դերանվան առկայությունն է «Աստված մեզ լքել է (կամ «անտես է արել»)» արտահայտության մեջ, որը խորենացու մոտ իսպառ բացակայում է: Քոմսուսն է միայն, որ «մեզ»-ը առել է անկյունավոր փակագծերի մեջ՝ [US], նշելով դրանով, որ այն բնագրում չկա:

Այս բոլոր դիտողությունները հաշվի առնելուց հետո քննարկվող նախադասության թարգմանությունը ստանում է բնագրային հետևյալ ոչ միայն «արտածամանակա», այլև վերացական տեսքը. «Եվ ապա այս բոլորի դիմաց (հանդիման, փոխարենն, հատուցումն, պատիժն) ի՞նչ (այսինքն՝ ալսպիսի դեպքերում ի՞նչ է լինում—Գ. Ս.), եթե ոչ Աստու անտես անելը և տարրերի իրենց բնութիւնը փոխելը: Գարունը՝ երաշտ, ամառն անձրևալին...» և այլն: Սա հեղինակի եզրահանգումն է հնարավորի կապակցությամբ, և ոչ՝ հաղորդում տեղի ունեցածի (կամ ունեցողի) մասին, այսինքն լիովին համահունչ է գուշակության ժանրին:

Մարգարեության այս հանգուցային նախադասության բովանդակությունը իր հույժ հետաքրքրական արժարժումն է գտնում մեկ այլ հեղինակի՝ Անանիա Շիրակացու գործերում: Նախ հիշեցնենք էմինի թարգմանությունը. «Бог покинул нас и изменил природу стихии: весна сухая...» և այլն: Սա փաստորեն մեկնաբանություն է և ոչ թարգմանություն: Խորենացու մոտ ասված է. «...անտես առնել Աստուծոյ և տարերց փոխել զբնութիւնս իւրեանց»: էմինն այստեղ, թեև կամայաբար, բայց տրամաբանորեն ճիշտ ավելացրել է տարրերի փոփոխման մեխանիզմը, որը խորենացու մոտ, իրեն հատուկ սեղմ ու խտացված ոճին համապատասխան, սղված է: Այդ մեխանիզմը, սակայն, մանրամասն բնութագրված է Անանիայի երկու գործում՝ «Յաղագս կենդանատեսակաց» և «Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի են շարժունք և տեսութիւնք»:

Դրանցից առաջինում կարդում ենք. «Երկոտասանեքեան սոքա (կենդանատեսակք—Գ. Ս.) շարժին շորիք տարբերութեամբ՝ առ ի լինել միոյ տարևոր ժամանակի... և առնեն ջերմութիւն և ցրտութիւն, խոնաութիւն և երաշտութիւն, և իշխեն փոխմանց օդոյ և ժամանակաց: Բայց եթէ Աստուածային ինչ հասանէ հրաման, փոփոխին տարերց բնութիւնք. թէ արդեոք յողորմածութիւն կամ ի խրատ՝ որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամարայինն ցրտութիւն և ձմեռնաբերութիւն, և շնչումն սառնամանեաց՝ որ է արտաբոյ բնութեան ժամանակի, դիտելի նմա միայնոյ»⁶:

Տարրերի բնությունն, այսպիսով, փոխվում է Աստուծո հրամանով ի բալեզործություն կամ ի պատիժ մարդկանց:

Անանիայի մյուս գործից իմանում ենք, թե ինչպիսի մարդկանց ի պատիժ են լինում բնության արհավիրքները՝ «այս ի վրեժխնդրութիւն անզգամաց և ի խրատ այնոցիկ որ զահ և զերկիւղ Արարչին շունին ի հոգիս իւրեանց»⁷:

Այս երկու մեջբերումները, նախ, առարկայորեն ցուցադրում են խորենացու մոտ սոսկ ենթադրվող՝ Աստուծո անտես անելու և տարրերի փոփոխման միջև եղած կապը և փոփոխման բուն մեխանիզմը («աստուածային հրաման»): Երկրորդ, նրանցով մեկ անգամ ևս իր հաստատումն է գտնում խորենացու օգտագործած «յանդիմանութիւն» բառի մեր կիրառած «հատուցում», «պատիժ» իմաստը, քանի որ հար և նման պարագաներում նրանցում առկա են վերջիններիս համանիշները՝ «վրեժխնդրութիւն» և «խրատ» բառերը:

⁶ Տե՛ս Անանիայի Շիրակացու շամարողի Մատենագրութիւնը: Տեքստը մշակեց և հրատարակության համար պատրաստեց պրոֆ. Ա. Գ. Արրահամյանը, Երևան, 1943, էջ 324:

⁷ Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի. Տիեզերագիտութիւն եվ տոմար, աշխատություններ Աշ. Արրահամյանի. Երևան, 1940, էջ 35:

Այստեղ մենք չենք զբաղվի Խորենացու Ողբի և Շիրակացու տվյալ գործերի աղբյուրագիտական կապի, հնարավոր ազդեցություն ուղղության խրնդրով, դործր պատկերացնելով այնպես, որ տարրերի բնույթի փոփոխման թեման ո՛չ Խորենացու և ո՛չ էլ Շիրակացու մենաշնորհն է եղել: Այն ընդունված էր վաղ քրիստոնեական գրականության մեջ, հատկապես գուշակությունների բնագավառում⁸: Բացի այդ, համեմատելի հատվածների նյութական, բառային նմանություններն էլ առանձնապես ցցուն չեն⁹:

Անցնենք այժմ մարգարեության սարսափներով լի շարադրանքը եզրափակող նախադասությանը: Խորենացին այսպես է գրել: «Յոռմէ (այսինքն՝ այդ սարսափներից) պահեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, և զամենեսեան՝ ոյր երկրպագեն նմա ճշմարտութեամբ»: «Պահել» բայը, մտնականդ իր ապառնի ձևով, ինքնին բավականաչափ պերճախոս է. այստեղ աղաչանք է ապահովել մի բանից, որ կարող է իրականանալ ըստ գուշակության, բայց կարող է և կանխվել՝ Աստծո ողորմածությամբ: Այսինքն այս դիմումը, քրնարկվող տեսարի վերը դիտարկված ներածության հար և նման, բոլոր դեպքերում տեղափոխում է գործողությունը «արտածամանակյա» վիճակից՝ ապագա, այսինքն՝ դուշակության ոլորտը:

Միանգամայն նոր երանդ է ներմուծում սույն նախադասության երկրորդ մասը. «...և զամենեսեան՝ ոյր երկրպագեն նմա ճշմարտութեամբ»: Այսինքն, Պատմահոր աղաչանք-դիմումը բոլոր մարդկանց չի վերաբերում, այլ միայն բարեպաշտներին: Իսկ մնացածն¹⁰ը: Այստեղ այդ հարցի պատասխանը չկա, բայց այն կա, ինչպես տեսանք, Անանիայի մոտ՝ վերը մեջ բերված հատվածներից երկրորդում, որտեղ բնության արհավիրքները սահմանվում են «ի վրեժխնդրութիւն անզգամաց և ի խրատ այնոցիկ որ զահ և վերկիւղ Արարչին շունին ի հոգիս իրեանց»: Այս պահը տրամաբանորեն ենթադրվում է նաև Խորենացու մոտ:

Սա մի թեմա է, որ հիմնովին և քանիցս շեղված է Աստվածաշնչում՝ «Հովհաննես առարայի հայտնության» («Ապոկալիպսիս»)՝¹⁰ մեջ, որտեղ, իր այլ արտահայտությունների կողքին, կարողում ենք. «Երանելիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա. սոքա ունին իշխանութիւն ուտել ի փայտէն կենաց և մտանել ընդ դրունս քաղաքին (Նոր, գալիք Երուսաղեմի—Գ. Ս.): Այլ

8 Որպես օրինակ կարելի է ներկայացնել հատվածներ երեկի եկեղեցական հայրերից III դարում ապրած Կիպրիանոսի գուշակությունից: «Зимою дождь не оживляет семян. лето не дает тепла, чтобы созреть плодам. Весна потеряла свое прежнее обаяние. Осень — свое плодородие». Ցավոք, մեր գրադարաններում չկարողացա գտնել Կիպրիանոսի երկերի բնագրերը, և հատվածները տրված են ըստ М. В о л о ш и н. Лики творчества.— Пророки и метителл, Л., 1988, с. 189 գրքի: Քանի որ հեղինակը նշում է, որ ինքը ազատ թարգմանություն է արել բնագրից, ապա այդ «ազատությունը» լիարժեքացնելու համար ուսերենից հայերեն չենք թարգմանում: Շարունակությունը նույնպես շատ հետաքրքրական է մեր թեմայի առումով: «Дети рождаются многими... растет безлюдие. Земля без пахарей... Пшвы пустышны. И в правах тот же упадок. Нет больше невинности, нет справедливости или дружбы». Հմտ. Խորենացու Ողբը. «Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամոթոյ... սիրելիք դաճառանալ... հավատ վաճառաւ ընդ սնոտի կենցաղոյս...» և այլն: Տե՛ս և ստորև էջ 129, ծան. 13, եկեղեցական հայր Լակտանցիոսի գուշակությունից բերված հատվածը:

9 Այսպես, Գր. Խալաթյանը չի էլ դուրսագրում, ինչպես որ սովորություն ունի, Անանիայի հատվածը Խորենացու համապատասխան հատվածին որպես նրա աղբյուր, այլ բերում է այն սոսկ տողատակում (Армянские Аршакиды в «Истории Армении» Монсея Хоренского, ч. II, Материалы, М., 1903, с. 143. прим. I), իսկ Ակիմյանը, զուգահեռելով հանդերձ, նշում է, որ Անանիայի հատվածը «թերևս հեռավոր աղբյուր միայն կնկատվի» (Խորենացու համար) (նշվ. աշխ. էջ 27):

10 Լ. Զեքիյանը ևս նկատել է «Ողբին ներհայտորեն հայտնաբանական (apocalyptic) շեղտերը», նշվ. աշխ. էջ 31:

ելցեն արտաքս շունք, և դեղատուրք, սպանողք և կռապաշտք, և ամենեքեան որ սիրեն զստութիւն» (ԻԲ, 14—15):

Ի մի բերելով խնդրի քննարկումը, կարող ենք արձանագրել, որ Մովսեսը հորենացու Ողբի երկրորդ, եզրափակիչ մասը ոչ թե իր ժամանակի հայ իրականության նկարագրությունն է, նույնիսկ խտացրած գույններով, այլ աստվածաշնչական մարգարենքեր Երեմիայի ոգեշնչմամբ և Գաբրիայի օրինակով Պատմահոր բերանով արված մարգարեություն-գուշակություն:

Այսպիսով, Մովսեսը հորենացու «Հայոց պատմության» մեջ կիրառված պատմողական, հուշարկային, նկարագրական, ուղերձային, ներբողական, բանաստեղծական և այլ ժանրերին ավելանում է ևս մեկը՝ մարգարեականը:

Իր գուշակությունը շարադրելու համար Պատմահայրն ընտրել է մի յուրահաստուկ, անսովոր «արտածամանակյա» ոճ. որը նրա շարադրանքը կարծես օդում կախված անկշռության վիճակում է պահում և արտակարգ ուժեղ տպավորություն գործում ընթերցողի վրա: Իր բովանդակության այս նոր լուսարանությամբ այն նոր հիմք և ուղղություն է տալիս հորենացու պատմափոխության, գաղափարախոսական, հասարակական, աստվածաբանական և ժամանակին հատուկ՝ վախճանաբանական հայացքների հնարավոր հետազոտություններին:

Հարց է ծագում, սակայն, թե ինչն է դրդել հորենացուն հանդես գալ նմանօրինակ գուշակությամբ: Կարելի է ենթադրություն անել, թե սույն գուշակությունը իր պատմական հիմքն է ունեցել «Հայոց պատմության» մեջ շրջագրված, բայց հորենացու ապրած 440—490 թթ. իրականության մեջ¹¹, այսինքն եղել է vaticinia ex eventu—արդեն տեղի ունեցածի վրա հենվող կեղծ գուշակություն: Սակայն սա էլ առանձնապես հենակետեր չունի այդ տասնամյակների պատմության մեջ, որոնք լի էին Պարսկաստանի դեմ ազգային-աղատագրական և զրադաշտականության դեմ կրոնական պայքարով, որի հետքերը Ողբում հազիվ թե նշարելի են: Ուրեմն, ինչն է դրդել, այնուամենայնիվ:

Նախ, նշենք, որ Պատմահայրը հիմք է ունեցել այդպիսի գուշակություն անելու, որպիսի հիմքը փայլուն զուցադրում է Լ. Զեքիյանը վերը մեջ բերված հատվածում, թեև ինքը, մեր կարծիքով, մի քիչ շփազանցելով, այն բավարար է համարում նույնիսկ նկատագրության անելու համար¹²: Այստեղից, համենայնդեպս, հետևում է, որ այդ հիմքը միանգամայն բավարար է եղել գուշակության անելու համար: (Այդ հիմքը, հիշեցնենք, հորենացու կողմից անհամեմատ ավելի սուր ընկալումն էր «կրկնակի» վերջի՝ այսինքն՝ պետական և հոգևոր իշխանությունների կորստյան, դրա ընկալումն էր որպես «բացարձակ» վերջի, ինչը մեր սերունդների կամ զիտական եզրահանդումների համար հնարավոր չէ, նկատի առնելով մեր իրազեկությունը հետագա պատմությանը):

Իսկ ինչ հանգամանքներ են նպաստել կամ ավելի լավ է ասել՝ թևակոծել, որ Պատմահայրը իրաջնի այդ հիմքը, դիմի գուշակության, մարգարեության: Իրանք, իմ կարծիքով, երկուսն էլ: Մեկը Պատմահոր ապրած ժամանակներին հատուկ ավարտաբանական ուսմունքներն ու հայացքներն էին, որոնք գուշակություններ էին ծնում խոր ճգնաժամ ապրող Հռոմեական կայսրության և մերձավոր երկրների մոտալուտ կործանման վերաբերյալ¹³:

11 Հմմտ. վերը, էջ 120, ծան. 4:

12 Տե՛ս վերը, էջ 120:

13 Վերը մեջբերված՝ Կիպրիանոսի գուշակությանը (էջ 127, ծան. 8), որը հենց այդ ուրուի էր պատկանում, ավելացնենք եկեղեցական երկելի հայրերից ևս մեկի՝ Լավրանցիոսի (250—մոտ. 325 թթ.) գուշակությունից հատվածներ, գարձալ, նույն պատճառով, որտեղին լեզվով: «Мир подходит к концу. Зло царит в мире... Меч пройдет по миру и пожмет жатву. Имя Рима будет стерто с лица земли... И придут времена ужаса. И не будет таких, кому мгла жизнь. Города будут разрушены до самого основания от»

Հայաստանը ևս դիտվում էր որպես այդ գործընթացի մասնակից և թագավորության ու հոգևոր իշխանության կորուստը ավելի բան արդարացնում էր այդպիսի մոտեցումը:

Երկրորդը «Աստվածաշնչի» անուրանալի ազդեցությունն է Պատմահոգի վրա, որը հատուկ ասյացուցման կարիք չունի: Տվյալ դեպքում հատկանշական է Երևմտյանի և Զաքարիայի՝ Հին կտակարանը եզրափակող մի ամբողջ շարք մարգարեություններից երկու երեքի հեղինակների այդչափ ցցուն վկայակոչելու և իրեն օրինակ ծառայեցնելու փաստը¹⁴: Չի կարելի աչքաթող անել նաև Խորենացու մոտ պարզորոշ կերպով շոշափվող «Հովհաննես առաքյալի հայտնության» («Ապոկալիպսիս») այն գաղափարը, թե կփրկվեն միայն բարեպաշտները:

Ինչպես Հին և Նոր կտակարաններն ավարտվում են մեկը՝ մարգարեությունների շարով, մյուսը՝ «Հայտնություն» դուշակությամբ, այնպես էլ Պատմահայրն իր «Հայոց պատմությունն» ավարտել է Ողբի եզրափակիչ մասը կազմող դուշակություն-մարգարեությամբ:

«ПЛАЧ» МОВСЕСА ХОРЕНАЦИ В НОВОЙ ИНТЕРПРЕТАЦИИ

Академик НАН РА Г. Х. САРКИСЯН

Р е з ю м е

В литературе о «Плаче», заключающем «Историю Армении» Мовсеса Хоренаци, отмечается несоответствие содержания его второй части как самой «Истории», так и действительности V в., когда она была написана. Предложенные объяснения неубедительны. Исследование текста автором показало, что эта часть «Плача» — не описание социальных и стихийных бедствий, постигших страну, а пророчество. Тому свидетелем само ее содержание, оригинальная «вневременная» форма ее изложения, указания предваряющего и заключающего ее абзацев и другие обстоятельства. Пророчество выражает фрустрацию, вызванную у Мовсеса Хоренаци утратой царской власти Аршакидами и духовной власти — родом Григория Просветителя, что представлялось автору подлинной гибелью Армении. Оно написано под влиянием эсхатологических идей времени, порожденных упадком Римской империи, а также серию пророчеств, завершающих Ветхий завет, и Апокалипсиса, завершающего Новый завет.

սեմ և մեղացում, երկտեսիքներով, ջրհեղեղներով, երկտեսիքներով, ջրհեղեղներով, երկտեսիքներով... Երկտեսիքներով, ջրհեղեղներով, երկտեսիքներով, ջրհեղեղներով... Երկտեսիքներով, ջրհեղեղներով, երկտեսիքներով, ջրհեղեղներով... Սրանք ժամանակին հատուկ դուշակությունների ընդունված ձևակերպումներ են:

¹⁴ Չմոռանանք հիշատակել այստեղ առկա ևս մի «մարգարեական» վկայակոչում (ավելի ճիշտ՝ դրևի բառացի մեջբերում), այս անգամ աստվածաշնչական Ծայրի մարգարեից, որի «Ոչ զոչ խաղաղութիւն ամբարշտաց՝ ասէ տէր» դարձվածքը (Ծս., 57, 21) Պատմահայրը ներկայացնում է այսպես. «Ըստ այնմ իմ է իբր խաղաղութիւն ամբարշտաց»: Հետաքրքրական է նշել, որ բննարկվող տեքստում սա միակ նախադասությունն է ներկա քերականական ժամանակով, և այն, մեջբերում լինելով, էլ ավելի ցցուն է դարձնում մնացած շարադրանքի «արտածամանակյա» բնույթը:

THE NEW INTERPRETATION OF „LAMENT“ OF MOVSES KHORENATSI

Academician of the NAS of the RA G. Kh. SARKISSIAN

S u m m a r y

The literature on „Lament“, completing the „History of Armenia“ of Movses Khorenatsi mentions about a discrepancy of the contents of its second part to both the „History“ and the Vth century's reality, when it was written. The suggested explanations are unconvincing. The investigation of the text by the author showed, that this part of „Lament“ isn't a *description* of social and elemental disasters of the land, but it's a *prophecy*. It's own matter, the original „out of time“ form of its statement, the indications of preliminary and final paragraphs and other circumstances witness to it. The prophecy has expressed the frustration, evoked at Movses Khorenatsi by the loss of reign power with Arshakids and spiritual power—with kin of Gregory Illuminator, which seemed to the author to be a genuine destruction of Armenia. It was written under the influence of eschatological ideas of time, raised with the decline of Roman Empire and the series of prophecies, completing the Old Testament as well as „Apocalypsis“, completing the New Testament.